# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2007թ. N161

ք.Ստեփանակերտ

## ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 28-րդ հոդվածի պահանջներն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *ո ր ո շ ու մ է.*

1. Օգտակար հանածոների որակը գնահատելու նպատակով անալիզի ենթարկված շարքային նմուշների կրկնօրինակների առնվազն 5 տոկոսը ենթակա է հսկողական անալիզների:

2. Հսկողական անալիզներն իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության միջոցով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ եռամսյա ժամկետում հաստատել օգտակար հանածոների որակական անալիտիկ տվյալների հսկողության, իրականացման և մատուցվող ծառայության գնի հաշվարկման կարգը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ** **Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**